ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4(29), 31 մայիս, 2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բաց մրցույթ՝ նոր պարեկային ծառայության ստեղծման շրջանակներում ուսուցումն անցկացնող դասընթացավարների ընտրության համար:

ՀՀ կառավարությունը 2019թ. դեկտեմբերին մեկնարկած՝ ոստիկանության ոլորտի լայնածավալ բարեփոխումների համատեքստում նախաձեռնել է նոր Պարեկային ծառայության ստեղծում, ինչը հաստատվեց ս.թ. ապրիլի 23-ին ընդունված «ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաս-

▶ 2

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

2020 թվականի ապրիլի 30-ին հեռավար կարգով տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2020 թվականի 5-րդ նիստը: Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց հաստատել ՀՀ-ում արտակարգ դրությամբ պայմանավորված՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի առանձնահատկությունները սահմանելու մասին որոշման նախագիծը» և «Ուսումնական գործընթացի առցանց կազմակերպման կարգը», փոփոխություններ կատարել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում արտակարգ դրության առաջին իսկ օրերից անմիջապես ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցները՝ շարունակելու բնականոն և արդյունավետ աշխատանքները: Գիտական խորհրդի առցանց նիստը ևս բացառություն չէր:

Սույն թվականի ապրիլի 30-ին հեռավար կարգով տեղի ունեցավ Կրթահամալիրի գիտական խորհրդի 2020 թվականի 4-րդ նիստը: Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց ՀՀ ոստիկանության պետին կրթահամալիրի ակադեմիայի 2020-2021 ուստարվա հեռակա և վճարովի ուսուցման տեղերի թվի վերաբերյալ առաջարկություն ներկայացնել, լրացումներ և փոփոխություն կատարել պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորման կարգում, հաստատել կրթահամալիրում սկսնակ դասախոսների մենթորության իրականացման և նախկին սովորողին վերաատեստավորման թույլտվության կարգերը:

ՇՆՈՐՀՎԵԼ Է ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ



Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի 2020 թվականի մայիսի 15-ի 8Ա-վ1 հրամանով հաստատվել և վկայականով ամրագրվել է Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 Իրավագիտության մասնագիտական խորհրդի որոշումը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր Լալա Գրիգորյանին իրավաբանական գիտությունների թեկնածուի (ԺԲ.00.05 թվանիշով) գիտական աստիճան շնորհելու մասին:

Շնորհավորենք նորընծա գիտնականին և մաղթենք նորանոր ձեռքբերումներ ապագա ոստիկանների կրթության և դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում:

ՄԱՅԻՍ՝ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍ

Սերունդնե՛ր, դուք ձեզ ճանաչե՛ք Սարդարապատից
Պարույր Սևակ

1918 թ. մայիսի 28-ին Սարդարապատից և Բաշ Ապարանից ստացված բարի լուրերով ոգեշունչ, Թիֆլիսում նստող Հայոց ազգային խորհուրդը հավաքվեց կարևորագույն իր ժողովին և արեց մի հայտարարություն, որի համեստ ու անաղմուկ բառերն աշխարհին հաղորդում էին Հայոց պետության վերականգնումը կամ նոր պետության ծնունդը:

Սուրբ հավատքին, մայրենի լեզվին, ազգային ինքնությանը հավատարիմ ու նվիրված լինելը հայ ժողովուրդը բազմիցս ապացուցել է իր անձնվեր կյանքով՝ կենաց ու մահու կռիվներով:

Վարդանանց պատերազմ. 451 թվականի մայիսի 26. Ավարայրի ճակատամարտում «Իմացյալ մահով» մարտիրոսվեցին հայոց քաջերը, իրենց կյանքը նվիրաբերեցին «Վասն հավատո, վասն հայրենյաց» և հայոց սերունդներին պատգամեցին սրբություններին հանդեպ հավատարմություն, հաղթական ոգի և մեծագույն սեր:

Վարդանանց պատերազմում հայ մարտիկները հայոց զորքը ոգեկոչող առաջնորդի՝ Վարդան Մամիկոնյանի հետ իմացյալ նահատակությամբ հզոր հիմք դրեցին հայոց ազգային արժեհամակարգի պահպանման գործում:

Ավարայրի ճակատամարտը մեծ դաս էր, հայոց ոգու մատյան, ինչպես և՝ ճշմարիտ քրիստոնյայի սպառիչ ու շեշտակի պատասխան:

Սարդարապատի ճակատամարտ՝ 1918 թվականի մայիսի 21-29-ը, Բաշ- Ապարանի ճակատամարտ՝ մայիսի 23-29-ը:

Հայկական զինված ուժերը ջախջախիչ պարտության մատնեցին թուրքական դիվիզիաներին: Հայ ժողովրդի բազմադարյա պատմության աստեղային ժամերից էր Սարդարապատի ճակատամարտը:

▶ 3

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Կյանքը լի է անակնկալներով: Իսկապես որ, չկա չարիք առանց բարիքի: Այս աշխարհացունց թագավարակը ևս մի փորձություն էր՝ ստուգելու մեր մասնագիտական, ժամանակակից տեխնիկայի միջոցները կիրառելու, անել իրադրությունից ելք փնտրելու և գտնելու, մտքի ճկունության և հնարամտության կարողությունները:

Երկիր մոլորակում մոլեգնող չարաբաստիկ թագավարակը մեզ ստիպեց հեռավար ուսուցման մեթոդին անցնել: Հոգ չէ, թե այդ փորձը մենք չունեինք. մենք պարզապես այլ ելք չունեինք: Հայաստանում այն կյանքի կոչվեց արտակարգ դրության պայմաններում: Աշխարհաքաղաքական իրադրությունը մեզ ստիպեց նաև կրթության ոլորտում իրավիճակային լուծումների անցնել:

Հեռավար դասընթացի անցկացումը հնարավորություն տվեց կատարելագործել և ընդլայնել համակարգչային մի շարք ծրագրերի, մասնավորապես՝ հեռահաղորդակցման համար նախատեսված ծրագրային հավելվածների, ինչպես նաև համացանցի տարբեր գործիքների վերաբերյալ գիտելիքները:

Մեր պրոֆեսորադասախոսական կազմն անցավ դասավանդվող թեմաների մատուցման նոր եղանակների, նոր ձևերի և մեթոդների մշակմանը և դրանց կատարյալ իրականացմանը:

Ուսուցման այս յուրօրինակ ձևը, ինչ խոսք, ակնկալում է միանգամայն նոր հետազոտություններ և նորամուծություններ: Ցանկանում եմ հատկապես առանձնացնել (չնայած դժվար է այս պարագայում անուններ առանձնացնելը) Հ. Խաչատրյանի մտորումները.

-Արդյունավետության առումով չի կարելի ասել, որ հեռավար ուսուցումը 100%-անոց է, սակայն ժխտելի չէ, որ 70%-ով ապահովում է դասախոս-ուսանող կապը:

Այո՛, գովելի է, որ կրթահամալիրի յուրաքանչյուր դասախոս գտել է դասապրոցեսն անցկացնելու իրեն հարմար տարբերակը, և վստահ ենք, որ ունենք արտակարգ դրության պայմաններում հեռավար որակյալ կրթություն ապահովելու հնարավորություն: Ի դեպ, կենսունակ հեռավար կրթության համակարգը ձևավորվում է յուրաքանչյուր դասախոսի և սովորողի լսարանային փորձառության արդյունքում:

Ըստ հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի հոգեբանության դասախոս, ոստիկանության կապիտան Մարիամ Կարապետյանի՝ հոգեբանական տեսանկյունից հեռավար դասընթացների անցկացումը զարգացնում է թե՛ դասախոսի, թե՛ սովորողների ստեղծագործական ակտիվությունը: Այն հնարավորություն է տալիս ոմանց նվազեցնել հոգեբանական լար-

▶ 2

ԴՈՒ ՄԵԶ ՀԵՏ ԵՍ ԱԶՆԱՎՈՒՐ

Տարիքն Ազնավուրին չէր զրկել ապրելու, ստեղծագործելու, երգելու, սիրելու և ծիծաղելու խենթ ախորժակից: Նա նաև մեզ էր ապրեցնում՝ ամոքելով մեր հույզերն ու զգացմունքները:
Էմանուել Մակրոն

Մակրոնին լսելիս կոկորդս սեղմվում էր. հուզված էր, անկեղծ էր: Շատ տպավորիչ էր. աշխարհը ցնցեց...

Շնորհակալ եմ, մեծարգո՛ նախագահ՝ արժանին մատուցեցիք, բոլորին լսեցրիք...

Իսկ եթե ինձ տրամադրեին խոսափողը, ինձ, որ ողջ գիտակցական կյանքս ապրել եմ Ազնավուրի արվեստով, հիացել նրա բացառիկ տաղանդով, դժվարությունները հաղթահարելու եզակի կարողությամբ, ազգին ծառայելու անմնացորդ նվիրումով, զարմացել եմ բեմի վրա նրա մշտապես կենդանի ձայնով և երիտասարդի ավյունով, հանդիսատեսի հանդեպ ունեցած անկեղծ ու ազնիվ վերաբերմունքով, տաղանդի անվերջանալի երիտասարդությամբ, ինչպե՞ս կհայտնեի աշխարհին, որ նրա երգերը լսելիս կարծես անէանում եմ, տեղափոխվում մեկ այլ՝ ազնավուրյան աշխարհ: Կկարողանայի՞ աշխարհը գերած փոքրամարմին այդ հսկային ըստ արժանվույն ներկայացնելու խոսքեր գտնել...

Ո՛չ, բառերն այստեղ անզոր կլինեին՝ ծեծված, մաշված ու կրկնված:

Ուստի, մնում է միայն ասել՝ դու մեզ հետ ես, Ազնավո՛ւր, որովհետև քո երգերն են մեզ հետ:

Ծնունդդ շնորհավոր, մաե՛ստրո:
Bon anniversaire!

Ա. Հայրապետյան
ոստիկանության գնդապետ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՆԻՍՏԵՐ

2020 թվականի ապրիլի 23-ին և մայիսի 8-ին «Zoom» հավելվածի միջոցով անցկացվեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ու ՕՀԳ և քրեագիտության ամբիոններին կից գործող հանցագործությունների բացահայտման և քննության հիմնահարցերի հետազոտության գիտական խմբակի հերթական նիստերը:

Առաջին նիստն անցկացրեց քրեական դատավարության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության կապիտան Ա.Ղազարյանը: «Հետաքննության հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարու-թյունում» վերտա-ռությամբ գիտական զեկույցով ներկայացան իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման 3-րդ կուրսի սովորողներ Ս.Հակոբյանը և Ա.Այվազյանը:

Հաջորդ նիստն անցկացրեց քրեական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Հովհաննիսյանը: Իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման 3-րդ կուրսի սովորող Լիլյա Հովակիմյանը ներկայացրեց «Դատախազական հսկողությունը և գերատեսչական վերահսկողությունը ՕՀԳ-ի նկատմամբ» վերտա-ռությամբ գիտական զեկույցը:

Նիստերին մասնակ-ցում էին գիտական խմբակի անդամները և վճարովի ուսուցման կուրսերի սովորողներ: Զեկույցների ավարտին սովորողները բանախոսներին հարցեր ուղղեցին և ստացան իրենց հուզող հարցերի հիմնավորված պատասխանները:



ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌՑԱՆՑ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մայիսի 22-ին առցանց եղանակով անցկացվեց կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը: Ամփոփիչ պետական ատեստավորման հանձնաժողովի նախագահն էր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ.Եսայանը: Հանձնաժողովի անդամներն էին Կրթահամալիրի պետ, ոստիկանության գներալ-մայոր Մ. Բաբայանը և ղեկավար կազմի այլ ներկայացուցիչներ:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցում էր 11 շրջանավարտ, որոնցից 5-ն արժանացան գերազանցության դիպլոմի:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի անձնակազմը սրտանց շնորհավորում է շրջանավարտներին՝ մաղթելով առողջություն և աշխատանքային հաջողություններ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

1 ◀ տատելու մասին» թիվ 638-Լ որոշմամբ:

Նոր Պարեկային ծառայությունը լինելու է ժամանակակից ոստիկանության առաջին ալիքը՝ նոր գործառույթներով, նոր սարքավորումներով, նոր կրթությամբ ու հմտություններով և ամենակարևորը՝ նոր մտածելակերպով: Այս նոր արժեքների ձևավորմանն ուղղված քայլերը կիրականացվեն ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 5 ամիս (սեպտեմբեր-հունվար) տևողությամբ ուսուցման ընթացքում:

Ծառայելու և պաշտպանելու և ոչ թե պատժելու քաղաքականության վրա հիմնված իրավապահ մարմիններ, հարգանքի արժանի պարեկային ծառայողներ ունենալու համար հարկավոր է արդիականացնել պատրաստման ծրագրերը, ուսումնական մեթոդն ու միջավայրը և, իհարկե, «դասավանդող-սովորող» փոխհարաբերությունները: Այս ամենին զուգահեռ կարևոր է նաև Պարեկային ծառայության բովանդակությանն ու փիլիսոփայությանը բնորոշ առարկայական ծրագրերի մշակումն ու դրանց հիման վրա ուսուցման կազմակերպումը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է բաց մրցույթ՝ նոր Պարեկային ծառայության ստեղծման շրջանակներում ուսուցումն անցկացնող դասընթացավարների ընտրության համար

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

1 ◀ վածությունը, ինչը կապված է տվյալ պայմաններում հոգեբանական ապահովություն զգալու հետ, որն էլ հեշտացնում է հաղորդակցման գործընթացը և օնլայն հարթակում անձին դարձնում է ավելի ակտիվ:

Այս տեսակետն ունի նաև քրեական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Հովհաննիսյանը: Նա ևս նշում է, որ հեռավար ուսուցման անկաշկանդ մթնոլորտն առավել նպաստում է ստեղծագործական հակումների դրսևորմանը: Իսկ լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանը, ռուսաց լեզվի դասախոս, ոստիկանության մայոր Ա. Եղոյանը և քաղաքացիական իրավունքի և դատավարության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Մ. Մանուկյանն իրենց դիտարկումներում նշեցին, որ հեռավար դասերն ապահովում են տեսողական ընկալման և տեսողական հիշողության զարգացումը, բարձրացնում են սովորողների ինքնուրույն աշխատելու և ինքնուրույն մտածելու կարողությունները:

Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս Հռիփսիմե Խաչատրյանն այս իրավիճակին մոտենում է մի պարզ փիլիսոփայությամբ՝ չկա չարիք՝ առանց բարիքի:

- Ցանկացած իրավիճակում, նույնիսկ՝ անել, մարդ պետք է կարողանա դրական կողմեր գտնել և դրանցից ոչ միայն չտուժել, այլև շահեկան դուրս գալ: Ասվածը վերաբերում է հատկապես մեզ՝ մանկավարժներիս:

Ուսումնական գործընթացի դադարեցումն անընդունելի կլիներ, քանի որ անորոշ է, թե այս ամենը երբ է վերջանալու:

Մանկավարժներիս առջև խնդիր դրվեց՝ օնլայն հարթակում հեռավար կազմակերպել և իրականացնել ուսումնական պարապմունքները: Բոլորս անցանք գործի, բայց կարելի է ասել, որ բոլորս էլ անփորձ էինք, քանի որ այստեղ, բացի մասնագիտական գիտելիքներից և հմտություններից, պահանջվում էին նաև ցանցային գիտելիքներ, որոնք չունեինք կամ բավարար չափով չունեինք: Մի խոսքով, բոլորս անցանք գործի, ինչպես կարող էինք: Մեզանից ոմանք կարողացան, ոմանք դժվարացան, յուրաքանչյուրը, ըստ իր մանկավարժական կարողությունների, փնտրեց, ելք գտավ ու հաղթահարեց:

Փորձեմ ձեզ հաղորդել իմ անձնական փորձը: Երկար մտածեցի, թե ինչպես աշխատեմ, որ կարողանամ առավելագույնս ապահովել այսօրվա խստապահանջ սովորողներին գիտելիքների փոխանցումը և միաժամանակ բավականություն ստանալ աշխատանքից:

Մտածեցի ու որոշեցի տեսադասեր պատրաստել և տեղադրել համապատասխան ժամին համապատասխան հարթակում:

Որպես կանոն՝ տեսադասը բաժանում եմ 3-4 մասի՝ պայմանավորված թեմաների հարցերով: Ձայնագրության մեջ ներկայացնում և քննարկում եմ յուրաքանչյուր հարց՝ օգտագործելով և ցուցադրելով և՛ շնորհանդես, և՛ թեմային առնչվող կողմնակի նյութեր, որոնք պետք է օգտագործեի սովորական լսարանային պայմաններում: Անում եմ ամեն ինչ, որ «լսարանը» չտուժի: Մի քիչ տխուր է ստացվում դասաժամս, քանի որ դասախոսության ընթացքում հարցեր չեն բարձրաձայնվում, լսարանային աշխույժ քննարկումներ չեն կատարվում:

Տեսադասը դիտելուց հետո սովորողները կատարում են գրավոր հարցադրումներ, և սկսում ենք գրավոր քննարկում: Ինքս գոհ եմ իմ կատարած աշխատանքից: Սա, իմ կարծիքով, յուրօրինակ մեթոդ է, որը սովորողներին հնարավորություն է տալիս անընդհատ դիտել տեսանյութը, որը կօգտագործվի նաև քննություններին պատրաստվելիս, անգամ հետագայում՝ մասնագիտական գործունեության ընթացքում:

Ռ. Մուսայելյան
ոստիկանության գնդապետ

ՄԱՅԻՍ՝ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՍ

1 ◀ Մայիսյան այդ ոգեշունչ շաբաթը դժոխքի բոլոր խորխորատներով անցած, կործանման եզրին հասած մեր ժողովրդի համար դարձավ ազգապահպան խարիսխ:

Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումը՝ 1918 թվականի մայիսի 28՝ հայոց դարավոր երազանքի մարմնավորումն էր և, հիրավի, մերօրյա անկախ Հայաստանի գոյության նախապայմանը: Առաջին հանրապետության ստեղծումը հայոց սրբազան գործի իրականացման կարևորագույն քայլերից էր, 600-ամյա ընդմիջումից հետո դարձյալ դրվեցին հայոց պետականության հիմքերը: Մայիսի 28-ը Հանրապետության տոնն է. աշխարհի հնագույն, ազնվասիրտ ժողովրդներից մեկը հաստատեց իր պատվական լինելը փառահեղ հաղթանակներով՝ ցնծագին մայիսներով:

Շուշիի ազատագրում՝ 1992 թ. մայիսի 9: Մեր հերոսական պատմության մեջ փառքի նոր էջեր գրվեցին Շուշիի անառիկ բերդի գրավումով: Շուշիի ազատագրումը պատմական անհրաժեշտություն էր՝ կոչված վերականգնելու հայկական հինավուրց հողի վրա հայերի ապրելու անքակտելի իրավունքը, ինչպես և՝ ամրապնդելու մարտերում կոփված հայոց հաղթական ոգին:

Հայոց հաղթանակների կարևորագույն դասը մեզ համար կուռ միասնությունն է: Հաղթել ենք, քանզի մի բռունցք ենք դարձել ազգովի: Հաղթել ենք հայրենիքի հանդեպ անեզր սիրո շնորհիվ, քանզի այն հավերժական է:

Մեր ժողովուրդը կոչված է մեծ առաքելության՝ մշտապես լինել արդարության մարտիկ, ապրել ու արարել՝ ի շահ ազգի ու հայրենիքի:

Դարերի երկիր Հայաստանի և հարազատ զավակների փառահեղ պատմությունը դրոշմված է մեր հայրենիքի ամեն մի քարի վրա, արդար քրտինքով ու հայրենանվեր հայորդու արյամբ սնուցված հայրենի հողի, հայոց հոգու մեջ: Մեր հոգու խորքում են ամբարած սրբությունները, և այդ է պատճառը հայոց հարատևության:

Մեր ոգեշունչ ժողովրդին չընկճեց երբեք ոչ մի փորձություն ու փոթորիկ: Հայն անձնվիրաբար կռվեց իր հողուջրի համար: Հաղթահարելով բազում աննկարագրելի դժվարություններ՝ շարունակեց ապրել ու հարատևել՝ շնորհիվ իրեն վերապահված ստեղծագործ մտքի, շինարար ձիրքի ու ամրակուռ բազկի, որի վառ վկան մեր այսօրվա ոստանն է՝ վերածնված Հայաստանի Հանրապետությունը:

Մենք ապրում ենք անկախ Հայաստանի ամեն մի զարկով, որը շունչ ու հոգու ճախրանք է պարգևում հայրենաբնակ և աշխարհասփյուռ հայերին, քանզի հայրենիքը մեր սրտի մեջ է՝ իր սեփական դրոշով, զինանշանով, իր հաղթական ու փառապանծ բանակով:

Անկախության սերունդ, որ բոլորից ճիշտ է հասկացել մայիսի 28-ի՝ Առաջին Հանրապետության ստեղծման պատգամը: Մենք՝ որպես պետություն, որպես ազգ և հասարակություն, մայիսի 28-ն ընդունում ենք որպես մեր ժողովրդի համար անդունդի եզրից վերադարձի օր, դեպի կյանք, վերածնունդ, արարում և դեպի աշխատանք վերադառնալու օր: Մենք վերադարձել ենք: Մեր անկախությունն ու պետականությունը մեզ ոչ ոք չի նվիրել: Մենք դրա համար վճարել ենք այնքան, որքան թերևս ոչ ոք չի վճարել: Մենք դա արել ենք մենակ, ավելին՝ մենք դա արել ենք ի հեճուկս ճակատագրի հարվածների: Հայոց քաջարի ոգին մշտարթուն է. այն զորացրել ու գոտեպնդել է մեզ՝ պահպանելու մեր պայծառ հավատքը, աստվածատուր լեզուն և ազգային ինքնությունը՝ անկրկնելի, սրբապաշտ տեսակը, որով մնացինք հայ և հատկապես՝ հայ քրիստոնյա:

Մեր ազգն իր հարուստ պատմության ընթացքում տարել է բազմաթիվ հաղթանակներ ու պարտություններ, անցել է Ավարայրի, Սարդարապատի, եղեռնի ճանապարհներով ու Արցախյան հերոսամարտով, իր հետ բերել է նվիրական անուններ, որոնք ապրել են և զոհվել՝ հանուն հավատի, հանուն ազգի և հայրենիքի: Բոլորս պետք է ապրենք այդ արժանիքներով, և պետության ու հասարակության գաղափարախոսությունը պետք է կառուցվի այս չափանիշներով:

Հայաստան աշխարհի վրա բացվող բոլոր գարունները թող պայծառ մայիսներ բերեն և հայոց հոգիներին՝ մայիսյան ցնծություններ:

Աննա Սարուխանյան
ոստիկանության կապիտան

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ցույց տանք աշխարհին, որ հայն ազատ և անկախ ապրելու իրավունք ունի:
Արամ Մանուկյան

Մայիսի 28-ը Առաջին Հանրապետության օրն է: 1918-ի մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին: Այդ օրը երախտապարտ հայ ժողովուրդը Սարդարապատ է այցելում, որտեղ, հաղթելով թուրքական բանակին, հայկական զորքերը կարողացան կասեցնել թշնամու ներխուժումն Անդրկովկաս: Օրհասական թվացող այդ օրերին Արամ Մանուկյանը, Դրոն, զորավար Թովմաս Նազարբեկյանը, Մովսես Սիլիկյանը և ուրիշներ կազմակերպեցին հայ կամավորական և կանոնավոր զորքեր՝ դիմագրավելու թուրքական առաջխաղացմանը:

1918-ի մայիսի 21-28-ը Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում հայկական զորքերին հաջողվեց կանգնեցնել, ապա Սարդարապատում և Բաշ-Ապարանում ջախջախիչ հարվածներ հասցնել թուրքական կանոնավոր բանակին: 900 տարի Հայաստանը չէր ունեցել պետականություն: Հայ ժողովրդի համար հսկայական նշանակություն ունեցավ պետականության վերականգնումը, որով և սկիզբ դրվեց հայկական պետական մտածողության, հայապահպանության և ազգի ամրապնդման:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Արամ Մանուկյանը հայ ժողովրդի բովանդակ պատմության մեջ այն սակավաթիվ իրատես դեմքերից էր, որոնց մեծությունը ճիշտ տեսնելու և գնահատելու համար անհրաժեշտ է ժամանակի հեռավորություն:1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իրեն հռչակել էր նորանկախ Հայաստանի գերագույն իշխանություն, սակայն Հ. Քաջազնունու կողմից ձևավորվող ՀՀ կառավարությունը մոտ երկու ամիս հետո ժամանեց Երևան: Պետական իշխանության և ժողովրդի ճակատագրին տեր կանգնելով՝ Արամ Մանուկյանն անմիջապես սկսեց Հայաստանի անկախությունը պետական հիմքերի վրա դնելու գործը: 1918թ. հունիսի կեսերին Ա. Մանուկյանը նախաձեռնեց Հայաստանի ժամանակավոր կառավարության՝ Երևանի Ազգային խորհրդի վարչության ստեղծումը, մինչև Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ Երևան կժամաներ Թիֆլիսում ստեղծված Հայաստանի կառավարությունը: Արամ Մանուկյանը Վարչության նախագահն էր և զինվորական բաժնի վարիչը:

ՄՈՎՍԵՍ ՍԻԼԻԿՅԱՆ

Մովսես Սիլիկյանը, ունենալով զինվորական կրթություն, մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի՝ ռուս-թուրքական ռազմաճակատի մարտական գործողություններին, Վանի հերոսամարտին, Բիթլիսի և Սարդարապատի հերոսամարտերին: Եղել է Կովկասի 6-րդ հրաձգային գնդի հրամանատար, որը գործել է գեներալ Թովմաս Նազարբեկյանի Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի կազմում: 1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով հայկական զինուժը չպետք է գերազանցեր մեկ դիվիզիայից: Գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը, հուլիսի 26-ի թիվ 99 հրամանի համաձայն, առաջին հայկական դիվիզիայի հրամանատար է նշանակում գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանին:

ԴԱՆԻԵԼ ԲԵԿ-ՓԻՐՈՒՄՅԱՆ

Բացառիկ է եղել Դանիել Բեկ-Փիրումյանի դերակատարումը Սարդարապատի ճակատամարտի հաղթանակում, որտեղ նա փաստացի հանդիսացել է այդ ուղղությամբ հայկական զորաջոկատների ընդհանուր հրամանատար: Հենց Դանիել Բեկ-Փիրումյանի անմիջական ջանքերով հնարավոր եղավ կազմակերպել Սարդարապատի ռազմաճակատի գիծը և արժանի հակահարված տալ թուրք զավթիչներին:

Դանիել Բեկ-Փիրումյանը մեծ ներդրում ունի նաև նորանկախ Հայաստանի բանակաշինության գործում:

ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ (ԴՐՈ)

Դրոն հայտնի է որպես Հայաստանի Առաջին Հանրապետության զորավար, ֆիդայի, վրիժառու, ազատագրական շարժման գործիչ, Առաջին Հանրապետության ռազմական նախարար և նրա հիմնադիրներից մեկը:

1918 թվականի մայիսի 23-27-ը Դրոն ստանձնեց Ապարանի ճակատամարտի հրամանատարությունը: Բաշ-Ապարանի ճակատամարտը, հիրավի, Դրաստամատ Կանայանի փառքի գագաթնակետն էր: Հայ ժողովրդի համար օրհասական այդ օրերին նա կարողացավ ոչ միայն կասեցնել թուրքական 13 000-անոց զորաբանակի առաջխաղացումը դեպի Երևան, այլև ջախջախիչ հարված հասցրեց թուրքերին, որոնք խուճապահար փախան մարտադաշտից:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Ականավոր ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, Սարդարապատի ճակատամարտում հայկական կորպուսի հրետանային բրիգադի հրամանատար, ում ընտանեկան զինանշանի վրա գրված էր եղել «Հայրենիք ու պատիվ»:

Նա Հայաստանի Առաջին Հանրապետության երկրորդ ռազմական նախարարն էր:

Լիանա Խրշոյան
ոստիկանության լեյտենանտ



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏ

2020 թվականի մայիսի 3-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի հերթական նիստը՝ հեռավար ձևաչափով:

Նիստի ընթացքում ձևավորվեցին հանձնաժողովները, քննարկվեցին առաջիկայում իրականացվելիք ծրագրերը:

Ավարտին մասնակիցներն ուսումնասիրեցին ուսանողական խորհրդի կանոնադրության, գերազանցության դիպլոմների ստացման կարգի փոփոխման ու մի շարք այլ հարցերի վերաբերյալ առաջարկությունները և որոշեցին ներկայացնել կրթահամալիրի ղեկավարությանը:

ԱՐԺԱՆԱՑԵ՛Ք ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻՆ

«Օրենքի պատվար» մեդալով ծառայողները պարգևատրվում են ոստիկանության գործունեության զարգացման, օրինականության ամրապնդման, հանցավորության դեմ պայքարի, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման, անձնակազմի դաստիարակության գործում զգալի ներդրում ունենալու, ինչպես նաև հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար:

«Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով ծառայողները պարգևատրվում են ոստիկանության գործունեության զարգացման, իրավակարգի ամրապնդման, հանցավորության դեմ պայքարի, հասարակական կարգի պահպանության, անձնակազմի դաստիարակության գործում զգալի ներդրում ունենալու, ինչպես նաև հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար: «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով ծառայողները պարգևատրվում են «Օրենքի պատվար» մեդալով պարգևատրվելուց հետո:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

Արխիվային փոշոտ գործեր, նկարներ և հիշողություն... Տասնամյակներ պահած արխիվային կապոցը բացում է Մարտիրոս Մուրադյանը և ասում, որ շատ բան չկա պատմելու, բայց պատմելու շատ բան կար, և այսպես...

1941թ. Հայրենական մեծ պատերազմ. մարդիկ պայքարում էին սեփական գոյության և հայրենիքի բարօրության համար: Հայաստանում, ինչպես սովետական յուրաքանչյուր երկրում, զարհուրելի ժամանակներ էին. ուժային կառույցներն աշխատում էին մեծ թափով: Հենց այդ ժամանակահատվածում էր, որ երիտասարդ Մարտիրոսը որոշեց ծառայության անցնել ՆԳՆ (Սովետական միլիցիա): Նա մտադրվել էր այս միջոցով նվիրվելու, ծառայելու իր հայրենիքին և իր ժողովրդին:

1943թ. Մարտիրոս Մուրադյանն արդեն օպերատիվ աշխատակից էր կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բաժնում:

Աչքի ընկնելով մասնագիտական բարձր պատրաստակամությամբ և պատասխանատվությամբ՝ 1944թ. Մուրադյանին վստահեցին քննիչի բարդ և պատասխանատու աշխատանքը, իսկ երկու տարի անց՝ 1945թ., նշանակվեց կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բաժանմունքի պետ:

1948-1950թթ. եղել է Հոկտեմբերյանի բաժնի պետ, 1961թ.՝ Աշտարակի բաժնի

պետ, այստեղից էլ փոխգնդապետի կոչումով անցել է վաստակած թոշակի:

Մուրադյանի նվիրվածությունը հայրենիքին և միլիցիային մեծ էր, այդ իսկ պատճառով որդուն՝ Վալերի Մուրադյանին, վարակում է նույն չակերտավոր հիվանդությամբ:

Հոր նվիրական գործը շարունակում է որդին և 1967թ. շարքային միլիցիոների կոչումով սկսում է իր հետաքրքիր, բայց դժվարին ուղին:

90-ականներ, կրկին պատերազմ. այս անգամ՝ Արցախյան: Ժողովուրդը պայքարում է սեփական գոյության և հայրենի հողերը պահպանելու համար: Ունենալով արցախյան արմատներ՝ այդ շրջանում Մուրադյանն անում էր ամեն հնարավորը՝ սեփական ժողովրդին օգնելու համար: Նա Ռուսաստանի Դաշնությունից օգնություն էր ստանում ու մեծ ջանքերով հասցնում Արցախ:

1995թ. Վալերի Մուրադյանը դասակի հրամանատար էր, իսկ 1999թ. կապիտանի կոչումով անցավ վաստակած թոշակի:

Վալերիի որդին՝ կրտսեր Մարտիրոս Մուրադյանը, տեսնելով և լսելով հոր և պապի՝ մեծ հարգանքի արժանացած նվիրական գործը, հպարտանում էր նրանցով, բայց երբ գալիս է մասնագիտություն ընտրելու ժամանակը, Մուրադյան կրտսերը մտածում էր բժիշկ դառնալու մասին, հետո փոխում է մտադրությունը և ընդունվում մեկ այլ բուհ:

Բայց, արի ու տես, որ Մուրադյանի ջանքերն ապարդյուն էին. կյանքը կրկին նրան բերում է ոստիկանություն:

1999թ. կրտսեր Մարտիրոս Մուրադյանն ընդունվում է ՆԳՆ կադրերում որպես տեսուչ:

Մարտիրոս Մուրադյանն իր պապից ու հորից ժառանգել է կարևորագույն հատկանիշներ՝ աշխատասիրություն և սկզբունքայնություն: Ղեկավարությունը, բարձր գնահատելով նրա արժանիքները, 2013թ. նրան նշանակում է Երևան քաղաքի վարչությունում կադրերի բաժնի պետ:

2017թվականից աշխատում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես կադրերի բաժնի պետ:

Ցավոք, Մուրադյանների ոստիկանական դինաստիան այստեղ ընդհատվում է. կրտսեր Մարտիրոս Մուրադյանի երկու երեխաներն իրենց մասնագիտական հետաքրքրությունն ուրիշ բնագավառում են

գտել:

Բայց, ինչպես ասում են, դեռ ամեն ինչ առջևում է: Մ. Մուրադյանը փակում է թղթե կապոցով հիշողությունների գիրքն ու մի լավ քարկապում:

Հուսով ենք՝ այն կրկին բացվելու է, և ընդհատված դինաստիան կրկին շարունակվելու է...

Մարիետա Խերանյան
ոստիկանության ավագ լեյտենանտ

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ



Երկու բան պետք է լցնի մարդու հոգին հիացմունքով ու հարգանքով՝ աստղալից երկինքը գլխի վերևում և բարոյական օրենքը սրտի մեջ:

Գարեգին Նժդեհ

Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի և մահվան առջև, հաղթական հայրենիք չի ունենա:

Գարեգին Նժդեհ

Յուրաքանչյուր ազգի պարտականությունը մարդկության հանդեպ նախևառաջ դրսևորվում է սեփական ազգի կենսունակության պահպանման և սեփական մշակույթի զարգացման ձևով:

Գարեգին Նժդեհ

Չասելով ասելը, երևի, ավելի մեծ իմացություն ու կուլտուրա է պահանջում:

Հրանտ Մաթևոսյան

Ընտանիք ստեղծելու համար բավական է սիրել, իսկ այն պահպանելու համար պետք է սովորել համբերել և ներել:

Մայր Թերեզա

Կյանքը հեծանիվ քշելու պես մի բան է: Հավասարակշռությունդ պահելու համար պետք է շարունակես առաջ շարժվել:

Ալբերտ Էյնշտեյն

Միայն երկու բան սահման չունի՝ տիեզերքն ու մարդկային հիմարությունը: Առաջինի անսահմանության վրա կասկածում եմ:

Ալբերտ Էյնշտեյն

Մի՛ վստահիր այն մարդկանց, ում զգացմունքները փոխվում են ժամանակի ընթացքում, վստահի՛ր նրանց, որոնց զգացմունքներն անփոփոխ են մնում նույնիսկ, երբ փոխվում են ժամանակները:

Բոբ Մարլի

Սիրի՛ր այն կյանքը, որով ապրում ես ու ապրի՛ր այն կյանքը, որը սիրում ես:

Բոբ Մարլի

Առաքինության ամենամեծ սխրանքները կատարվել են հայրենիքի հանդեպ ունեցած սիրուց:

Ժան-Ժակ Ռուսսո

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ԵՌԱԲԼՈՒՐ



Հայրենյաց տան մեջ՝ մի Եռաբլուր,
Ուր հոգիներ կան՝ անօթևան, լուռ,
Եվ լռության մեջ՝ շիրիմների տակ,
Քաջ որդիներն են հանգչում նահատակ:

Շուրջը՝ մենություն, քարերի քաղաք,
Ամեն քարի տակ՝ աշխարհ բովանդակ,
Անուններ տարբեր, մեծ ու փոքր կյանք,
Մայրերի համար՝ սրբավայր ու վանք:

Վշտահար մարդիկ՝ քարերը գրկած,
Աղոթք ու մրմունջ հղած առ Աստված...
Ամեն զինվորի սուրբ արյան համար
Պատասխան պիտ տանք՝ ահեղ ու արդար:

Եվ հողաթմբեր՝ դեռ առանց քարի,
Սևազգեստ մայրեր,խոնարհված դեմքեր,
Դառը արցունքներ, ծաղիկների փունջ,
Անլռելի ցավ, մորմոք ու տրտունջ:

Հերոսի մահով ընկած զինվորներ՝
Հայացքներն հառած լեռ Մասիսն ի վեր,
Անունները՝ գանձ, քարերին գրված,
Պատմությունն են մեր Հայոց փառապանծ:

Կարինե Կիրակոսյան
ոստիկանության գնդապետ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 05. 2020թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: